

## Կանոնավոր և անկանոն կոտորակներ/ մաս 3.

### Համարիչ հայտարար

Այն կոտորակը, որի համարիչը փոքր է հայտարարից անվանում ենք կանոնավոր կոտորակ:

Օրինակ՝  $\frac{5}{8}$  կոտորակը կանոնավոր է, քանի որ  $5 < 8$ :

Այն կոտորակը, որի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան անվանում ենք անկանոն կոտորակ:

### Օրինակներ՝

$\frac{7}{5}$  կոտորակը անկանոն է, քանի որ  $7 > 5$

$\frac{7}{7}$  կոտորակը անկանոն է, քանի որ  $7 = 7$ :

### Առաջադրանքներ՝

- Իրարից առանձնացրեք կանոնավոր և անկանոն կոտորակները.

$\frac{69}{35}$ ,  $\frac{77}{77}$ ,  $\frac{86}{165}$ ,  $\frac{7}{18}$ ,  $\frac{17}{55}$ ,  $\frac{9}{35}$ ,  $\frac{47}{31}$ ,  $\frac{7}{14}$ ,  $\frac{101}{805}$ ,  $\frac{9}{15}$ ,  $\frac{6}{25}$ ,  $\frac{405}{161}$ ,  $\frac{651}{51}$ ,  $\frac{66}{66}$

### Կանոնավոր կոտորակներ՝

$\frac{86}{165}$ ,  $\frac{7}{18}$ ,  $\frac{9}{35}$ ,  $\frac{17}{55}$ ,  $\frac{7}{14}$ ,  $\frac{101}{805}$ ,  $\frac{9}{15}$ ,  $\frac{6}{25}$

### Անկանոն կոտորակներ՝

$\frac{69}{35}$ ,  $\frac{77}{77}$ ,  $\frac{47}{31}$ ,  $\frac{405}{161}$ ,  $\frac{651}{51}$ ,  $\frac{66}{66}$

- Աստղանիշը փոխարինիր այնպիսի թվանշանով, որ ստանաս

- կանոնավոր կոտորակ

$$\frac{112}{312}, \frac{17}{24}, \frac{105}{114}, \frac{129}{195}$$

- Անկանոն կոտորակ

$$\frac{48}{38}, \frac{437}{427}, \frac{395}{385}, \frac{207}{207}$$

### 3. Համեմատեք.

$$\frac{27}{5} > \frac{8}{9}$$

$$\frac{7}{6} > \frac{5}{8}$$

$$\frac{10}{4} > \frac{18}{21}$$

$$1 < \frac{9}{4}$$

$$1 > \frac{4}{9}$$

$$1 = \frac{101}{101}$$

### 4. Արտահայտիր նշված միավորներով՝

$$\frac{3}{4} \text{ ց} = 75 \text{ կգ}$$

$$\frac{3}{500} \text{ կմ} = 6 \text{ մ}$$

$$\frac{4}{5} \text{ դմ} = 8 \text{ սմ}$$

$$\frac{4}{25} \text{ կգ} = 160 \text{ գ}$$

$$\frac{5}{3} \text{ ժ} = 100 \text{ ր}$$

Խնդիր 5.

Ջրավազանում կար 3600 լիտր ջուր: Այգին ջրելու համար օգտագործվեց նրա  $\frac{3}{4}$  մասը: Քանի՞ լիտր ջուր մնաց ջրավազանում:

$$3600:4 \times 3 = 2700$$

$$3600 - 2700 = 900$$

**Խնդիր 6.**

Ուղղանկյան երկարությունը 40 սմ է, իսկ լայնությունը կազմում է նրա  $\frac{2}{5}$ -րդ մասը: Գտիր ուղղանկյան պարագիծը:

$$40:5 \times 2 = 16 \text{ սմ}$$

$$2 \times (40 + 16) = 112 \text{ սմ}$$

**Խնդիր 7.**

Ամբողջ ճանապարհի  $\frac{9}{13}$ -րդ մասը անցնելուց հետո  $n$  ը մասը կմնա անցնելու:

$$\frac{13}{13} - \frac{9}{13} = \frac{4}{13}$$